ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/14

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Մասնակցությամբ՝
Պատվիրատուի ներկայացուցիչ՝ Ս. Աղաջանյան
Ընկերության ներկայացուցիչներ՝ Հ. Ենգոյան, Ա. Պարանյան

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Արտավազդ Սարոյան» Ա/Ձ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 18.04.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է դադարեցնել «Աբովյանի քաղաքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպված «ԱԲՔՏ-ԳՀԱՊՁԲ 19/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.04.2019թ. տեղի

ունեցած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ա/Ձ Արտավազդ Սարոյանի կողմից ներկայացված հայտը անբավարար գնահատելու մասին որոշումը:

Բողոքներ քննող անձի 18.04.2019թ. որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 25.04.2019թ., 08.05.2019թ. և 15.05.2019թ. նշանակվել են նիստեր:

Բողոքաբերի կողմից 29.04.2019թ. ներկայացվել է բողոքի լրացում:

Բողոքի քննությունն ավարտվել է 15.05.2019թ. և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 17.05.2019թ.:

2. <u>«Արտավազդ Սարոյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Արտավազդ Սարոյան» Ա/Ձ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Աբովյանի քաղաքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի կարիքների համար «Վերելակների պահեստամասերի» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱԲՔՏ-ԳՀԱՊՁԲ 19/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել Ա/Ձ Արտավազդ Սարոյանը և <<Լիֆտէլեկտրոնիքս>> ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.03.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 2.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել ծանուցել Ա/Ձ Արտավազդ Սարոյան և <<Լիֆտէլեկտրոնիքս>> ՍՊԸ-ին, որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ, հրավերով սահմանված կարգով և 3-օրյա ժամկետում հանձնաժողովին ներկայացնել իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված 6.1 և մասնագիտական փորձառությունն ունեցող ապահովող փաստաթղթեր:

Համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.04.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության Ա/Ձ Արտավազդ Սարոյանի ներկայացրած հայտը գնահատվում է անբավարար Կարգի 43-րդ կետի 4 ենթակետի և «ԱԲՔՏ-ԳՀԱՊՁԲ 19/02» Հրավերի 7.13 կետի պահանջները չբավարարելու հիմքով պայմանավորված: Մասնավորապես Ա/Ձ Արտավազդ Սարոյանի մասնագիտական փորձառությունն ապահովող փաստաթղթերը հրավերում նշված էլեկտրոնային փոստին չի ուղարկվել, այլ ներկայացրել է թղթային տարբերակով:

Իսկ նույն արձանագրության 2.1 կետի համաձայն՝ Ա/Ձ Արտավազդ Սարոյանի կողմից իր հայտի <<Անբավարար>> գնահատականը չնդունելու հետ կապված հանձնաժողովը որոշեց հարցում կատարել լիազոր մարմնին:

Ի պատասխան վերոնշված հարցման ՀՀ ՖՆ կողմից 11.04.2019թ. տրամադրել է պարզաբանում /կցվում է/, մասնավորապես՝

Գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք), ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով (այսուհետ՝ Կարգ) և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներով: Մասնավորապես, Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Իսկ Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ հայտերի գնահատման իրավասությունը վերապահված է գնահատող հանձնաժողովին:

Վերոգրյալով պայմանավորված հայտնում ենք, որ մասնակիցների ներկայացրած հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատումն իրականացնում է գնահատող հանձնաժողովը՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Միաժամանակ գտնում ենք, որ գրությամբ բարձրացված հարցը կարգավորված է կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով:

Գնահատող հանձնաժողովի 15.04.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ ՖՆ 11.04.2019թ. 1-26-1/602519 գրությունը, որոշեց Ա/Ձ Արտավազդ Սարոյանի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ Ընթացակարգի գնահատող

հանձնաժողովի 27.03.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 2.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել ծանուցել Ա/Ձ Արտավազդ Սարոյան և <<Լիֆտէլեկտրոնիքս>> ՍՊԸ-ին, որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ, հրավերով սահմանված կարգով և 3-օրյա ժամկետում հանձնաժողովին ներկայացնել իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված 6.1 և մասնագիտական փորձառությունն ունեցող ապահովող փաստաթղթեր: Վերոնշված արձանագրությունը gnumner.am համացանցային կայքում հրապարակվել է միայն 04.04.2019թ. և մինչ 04.04.2019թ. այդպես էլ գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից որևէ ծանուցում չի ուղարկվել, իսկ Ա/Ձ-ին 27.03.2019թ. արձանագրությունը ուղարկվել է 29.03.2019թ.:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 1 ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակում է տեղեկագրում, մինչդեռ հայտերի բացման նիստի արձանագրությունը gnumner.am համացանցային կայքում հրապարակվել է միայն 04.04.2019թ.-ին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4 ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին, մինչդեռ 27.03.2019թ. մինչև 04.04.2019թ. ընկած ժամանակահատվածում գնահատող հանձնաժողովի կամ հանձնաժողովի քարտուղարի կողմից որևէ ծանուցում չի ստացվել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ Ա/Ձ Արտավազդ Սարոյանը այդպես էլ չստանալով որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու պահանջը /Ծանուցում/, այլ փոխարենը 29.03.2019թ. ստանալով միայն 27.03.2019թ.-ի արձանագրությունը՝ նույն 29.03.2019թ. թղթային տարբերակով ներկայացրել է գնահատող հանձնաժողովին պահանջվող փաստաթղթերը, որը փաստվել է նաև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.04.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք քննարկել նաև գնահատող հանձնաժողովի կողմից 15.04.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ ՀՀ ՖՆ 11.04.2019թ. թիվ 1-26-1/602519 գրությունը հիմք ընդունելով Ա/Ձ Արտավազդ Սարոյանի կողմից ներկայացված հայտը անբավարար գնահատելու իրավաչափության հարցը, մասնավորապես ՀՀ ՖՆ 11.04.2019թ. թիվ 1-26-1/602519 գրությունը ուսումնասիրելիս, ակնհայտ է որ ֆինանսների նախարարությունը հղում է կատարում Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետին, որով նախատեսվում է, որ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսինքն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է, որ քանի որ Ա/Ձ Արտավազդ Սարոյանի կողմից սահմանված ժամկետում փաստաթղթերը ներկայացվել են թղթային տարբերակով, այլ ոչ թե էլեկտրոնային տարբերակով ուստի Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար: Մինչդեռ Աբովյանի քաղաքային տնտեսություն ՀՈԱԿ-ը՝ ՀՀ ՖՆ-ին 09.04.2019թ. ուղված գրությամբ ամենայն հավանականությամբ չի հայտնել, որ գնահատող հանձնաժողովի կամ հանձնաժողովի քարտուղարի կողմից սահմանված ժամկետում որևէ ծանուցում Ա/Ձ-ին չի ուղարկվել:

Գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անհասկանալի և անհիմն գործողությունների հետևանքով խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-

րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետով սահմանված պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքը, ինչ էլ իր հերթին հանգեցրել է Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված մասնակցի մասնակցության իրավունքի իրականացման սահմանափակմանը կամ ոչ լիարժեք իրականացմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման...:»:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել են դադարեցնել «Աբովյանի քաղաքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպված «ԱԲՔՏ-ԳՀԱՊՁԲ 19/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.04.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ա/Ձ Արտավազդ Սարոյանի կողմից ներկայացված հայտը անբավարար գնահատելու մասին որոշումը:

Ի լրումն ներկայացված բողոքի ընկերությունը հայտնել է, որ՝ *«բողոքի քննության վերաբերյալ 25.04.2019թ. տեղի ունեցած նիստի ընթացքում Պատվիրատուի ներկայացուցիչը կարծես թե հաստատեց թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/14 բողոքով վիճարկվող այն հանգամանքը, որ Պատվիրատուն որակավորման փաստաթղթերի որևէ ծանուցում էլ. փոստի միջոցով չի ուղարկել Ա/Ձ-ին, ավելին՝ նշեց նաև, որ ծանուցման որևէ ձև գոյություն չունի:*

Համապատասխան ծանուցումների օրինակները կցվում են:

Միևնույն ժամանակ 25.04.2019թ. Ա/Ձ Արտավազդ Սարոյանի կողմից լիազորված ներկայացուցիչը հայտնեց որ 27.03.2019թ. արձանագրությունը ուղարկվել է Ա/Ձ-ին 29.03.2019թ., իսկ այնուհետև ինչպես հետագայում պարզվել է չափաբաժինների տեղերը շփոթելու արդյունքում 27.03.2019թ. արձանագրությունում կատարվել է փոփոխություն և այն կրկին անգամ ուղարկվել է Ա/Ձ-ին արդեն 03.04.2019թ.:

Նորից Ա/Ձ-ն չստանալով որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու ծանուցումը 06.04.2019թ. 2-րդ փուլի փաստաթղթերը ներկայացրել է էլ. փոստի միջոցով:»:

3. <u>«Աբովյանի քաղաքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 19.04.2019թ. գրությամբ դիմել է «Աբովյանի քաղաքային տնտեսություն» ՀՈԱԿ-ին՝ հնարավորություն տալով «Արտավազդ Սարոյան» Ա/Ձ-ի կողմից 18.04.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր կարծիք չի ներկայացվել:

Պատվիրատուի ներկայացուցիչը ներկայացել է նշանակված նիստերին և բանավոր կերպով Բողոքներ քննող անձին հայտնել է, որ մասնակցին որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին ծանուցումը էլեկտրոնային փոստի միջոցով չի ուղարկել «Արտավազդ Սարոյան» Ա/Ձ-ն, այլ միայն ուղարկել է արձանագրության պատճենը:

4. <u>ԳԲՔԱ-LO-2019/14 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

«Աբովյանի քաղաքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի կողմից «Վերելակների պահեստամասերի» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱԲՔՏ-ԳՀԱՊՁԲ 19/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Արտավազդ Սարոյան» Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.03.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 2.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է ծանուցել «Արտավազդ Սարոյան» Ա/Ձ-ին, որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից, հրավերով սահմանված կարգով և 3-օրյա ժամկետում հանձնաժողովին ներկայացնել իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված 6.1 և մասնագիտական փորձառությունն ունեցող ապահովող փաստաթղթեր:

«Արտավազդ Սարոյան» Ա/Ձ-ին ծանուցում չի ուղարկվել:

«ԱԲՔՏ-ԳՀԱՊՁԲ-19-02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.03.2019թ. նեղի ունեցած հայտերի բացման նիստի վերաբերյալ արձանագրությունը www.gnumner.am կայքում հրապարակվել է 04.04.2019թ.:

Պատվիրատուն 03.04.2019թ. էլեկտրոնային փոստի միջոցով «Արտավազդ Սարոյան» Ա/Ձ-ին է ուղարկել հայտերի բացման իստի թիվ 2 արձանագրություն:

Ընկերությունը 06.04.2019թ. ուղարկել է թիվ 6 և 6.1 հավելվածները /առդիր փաստաթղթերով/:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.04.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Արտավազդ Սարոյան» Ա/Ձ-ի ներկայացրած հայտը գնահատվում է անբավարար Կարգի 43-րդ կետի 4 ենթակետի և «ԱԲՔՏ-ԳՀԱՊՁԲ 19/02» Հրավերի 7.13 կետի պահանջները չբավարարելու հիմքով պայմանավորված: Մասնավորապես Ա/Ձ Արտավազդ Սարոյանի մասնագիտական փորձառությունն ապահովող փաստաթղթերը հրավերում նշված էլեկտրոնային փոստին չի ուղարկվել, այլ ներկայացրել է թղթային տարբերակով:

Նույն արձանագրության 2.1 կետի համաձայն՝ Ընկրության կողմից իր հայտի <<Անբավարար>> գնահատականը չնդունելու հետ կապված հանձնաժողովը որոշել է հարցում կատարել լիազոր մարմնին:

Ի պատասխան վերոնշված հարցմանը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.04.2019թ. թիվ 1/26-1/6025-19 գրությամբ տրամադրել է պարզաբանում այն մասին, որ *«Գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք), ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով (այսուհետ՝ Կարգ) և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներով: Մասնավորապես, Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Իսկ Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ հայտերի գնահատման իրավասությունը վերապահված է գնահատող հանձնաժողովին:*

Վերոգրյալով պայմանավորված հայտնում ենք, որ մասնակիցների ներկայացրած հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատումն իրականացնում է գնահատող հանձնաժողովը՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Միաժամանակ գտնում ենք, որ գրությամբ բարձրացված հարցը կարգավորված է կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով:»:

Գնահատող հանձնաժողովի 15.04.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության 11.04.2019թ. թիվ 1/26-1/6025-19 գրությունը, որոշել է Ընկերության հայտը գնահատել անբավարար:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Արտավազդ Սարոյան» Ա/Ձ-ի կողմից 18.04.2019թ. ներկայացված բողոքն ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակում է տեղեկագրում:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի

քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

«ԱԲՔՏ-ԳՀԱՊՁԲ 19/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 27.03.2019թ., ինչի արդյունքում կազմվել է թիվ 2 արձանագրությունը, որը www.gnumner.am կայքում հրապարակվել է միայն 04.04.2019թ.:

Ընթացակարգի արդյքունքում մի շարք չափաբաժինների մասով առաջին տեղն զբաղեցրած մասնակից՝ «Արտավազդ Սարոյան» Ա/Ձ-ին թիվ 2 արձանագրության համաձայն՝ Պատվիրատուն պետք է ծանուցեր՝ հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը և մասնագիտական փորձառությունն հավաստող փաստաթղթերը ներկայացնելու մասին, սակայն մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեին որևէ ծանուցում չի ուղարկվել:

Վերոնշյալ փաստը հաստատել է նաև Պատվիրատուի ներկայացուցիչը՝ հայտնելով, որ որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին ծանուցումը էլեկտրոնային փոստի միջոցով չի ուղարկել «Արտավազդ Սարոյան» Ա/Ձ-ն, այլ միայն ուղարկել է արձանագրության պատճենը:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 11.04.2019թ. թիվ 1/26-1/6025-19 գրությամբ տրամադրված պարզաբանմամբ նույնպես հայտնել է իր դիրքորոշումը այն մասին, որ Պատվիրատուի կողմից բարձրացված հարցը կարգավորված է Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Կարգի 43-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ պարտավոր էր հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակեր տեղեկագրում, ինչպես նաև պարտավոր էր էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցեր առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Սակայն գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից խախտվել է վերը նշված կարգով սահմանված պահանջները, ինչն և իր հերթին հանգեցնում է Օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածներով սահմանված պահանջների խախտմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Արտավազդ Սարոյան» ԱՍ/Ձ-ի կողմից 18.04.2019թ. ներկայացրած բողոքը բավարարել:

Պարտավորեցնել դադարեցնել «Աբովյանի քաղաքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպված «ԱԲՔՏ-ԳՀԱՊՁԲ 19/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.04.2019թ. տեղի ունեցած

նիստի թիվ 4 արձանագրության կայացված՝ Ա/Ձ Արտավազդ Սարոյանի կողմից ներկայացված հայտը անբավարար գնահատելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ